Հ. Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ. Հայերենի կետադրության համառոտ պատմություն. *Երևան, 1972, 146 էջ*

Հայերենի կետադրության պատմությանը առանձին ուսումնասիրություն նվիրելու անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում։ Շնորհիվ հայերենի գրչագիր ու վիմագիր հարուստ ժառանգության, գրչության արվեստում կիրառություն գտած տրոհության և առոգանության նշանների մասնագիտական քննության կարևորությունը ավելի է մեծանում։ Ձեռագիր մատյաններում և վիմագիր արձանագրություններում օգտագործված կետադրական նշանների դասդասումը. գործածության հանգամանքների ու ժամանակագրական սահմանների, պատմական զարգացման ընթացքում կրած անխուսափելի փոփոխությունների ընդհանուր պատկերի բացահայտումը լրացուցիչ հնարավորություններ կարող էին ընձեռել հայագետներին ձեռագրերի ու արձանագրությունների գրության հանգամանքների հետ կապված հարցերը ճշգրտելիս։ Գրախոսվող աշխատության առաջաբանում հեղինակը հաջողությամբ որոշել և ճշգրտել է հետազոտությունում քննության առնվող հարցերի շրջանակը։

Կետադրական նշանների առաջին խմբավորումներին և կետադրության անհրաժեշտության տեսական հիմնավորմանը հանդիպում ենք դեռևս Դ. Թրակացու քերականության հայերեն թարգմանությունում և հայ քերականների մեկնություններում։ Սակայն միայն հիմնական քերականական երկի թարգմանական լինելու հանգամանքով հայերեն թափանցած որոշ կետադրական նշաններ երկար կյանք չունեցան, առանձին դեպքերում սկսեցին այլ նպատակներով գործածվել, հաճախ էլ գրիչները լիովին չէ, որ հավատարիմ էին մնում քերականների տեսական դրույթներին։ Ուստի, Հ. Մխիթարյանը քննության է առնում ոչ միայն հայ քերականների տեսական ըմբռնումները այս կամ այն նշանի մասին (այդ հարցերը մինչ այդ էլ լուսաբանվել են), այլև տվյալ նշանի փաստական կիրառության հանգամանքները։ Հեղինակը հաջողությամբ հետամուտ է լինում կետադրական նշանների աստիճանական զարգացմանը և բացահայտում ժամանակակից նշանների նախատիպերը։ Ուսումնասիրելով վերջակետի դերով գործածված նշանները, Հ. Մխիթարյանը պարզում է, որ երկու կետով վերջակետի կիրառությունը սկսվում է X դ., իսկ գերակշռող է դառնում XI—XII դդ. (էջ 23—25), թեև վերջակետի նշանակությամբ գրիչները շարունակում են օգտագործել այլ նշաններ ևս։ Աշխատության հեղինակը եզրակացնում է, որ X դ. սկիզբ է առնում ստորակետի գործածությունը, և տրոհության նշանները վերջնականապես սահմանաղատվում են և՛ իրենց դերով, և՛ ձևով (էջ 37)։

Հ. Մխիթարյանը մեկ առ մեկ ճշտում է նաև առոգանության նշանների սկզբնական նշանակությունը, ապա ուրվագծում փոփոխությունների ու զարգացման ընդհանուր պատկերը։ Աշխատության վերջին բաժնում նա անդրադառնում է գրչության արվեստում կիրառություն գտած այն նշաններին, որոնք չեն արտացոլվել քերականական երկերում։ Այստեղ լուսաբանվում են ոչ միայն լերկի, մակակետի, չակերտի, գծիկի գործածման պարագաները, այլև ուսումնասիրվում են համառոտագրության ու սրբագրության նշանները։ Սակայն աշխատության այս մասը, հատկապես «Կետադրությունը վաղ տպագրության շրջանում» գլուխը, նյութի ոչ բավականաչափ ընդգրկման պատճառով, ցավոք, թուցիկ ակնարկի տպավորություն է թողնում։ Ընդհանուր առմամբ օգտակար այս աշխատությունը, դժբախտաբար, զերծ չէ թերություններից։ Հեղինակը ձեռագրերից բազմաթիվ փաստեր բերելով, հաճախ չի նշում ձեռագրի գրչության թվականը, դիրը, գրչագրի համապատասխան էջը, որոնց մասին դաղափար կազմելու համար ընթերցողը հարկադրված է դիմել ձեռագրերին ու ձեռագրացուցակներին։ Հ. Մխիթարյանի որոշ եզրակացություններ հակասական են, երբեմն էլ փաստական հիմնավորման կարոտ։ Հեղինակը, օրինակ, 80-րդ էջում գրում է, որ հայերեն թվակիր ամենահին գրչագրերում՝ Լազարյան և էջմիածնի ավետարաններում, երկարի նշանը ընդհանրապես չի գործածվել, իսկ բացականչական նշանի արժեքով սկսում է հանդիպել XI դ.։ Այնուհետև կարդում ենք՝ «Այսպիսով, ձեռագրական փաստերի քննությունից պարզվում է, որ բացականչական արժեքով երկարի կիրառությունը հայ մատենագրության մեջ երևում է դեռևս V դարից...» (էջ 83)։

Թավի և ենթամնայի նշանների գործածության սկիզբը համարելով XI դ. (էջ 90—91, 100), հեղինակը չի բերում իր եզրակացությունն հիմնավորող ձեռագրական փաստեր։

Հ. Գ. ՄԱՐԴԱՐՅԱՆ.